

գիտացնեն ամենեքեան՝ եթէ իմ աշակերտ էր, եթէ սիրելիք զմիմեանս: Սոյն ոգին ենք տեսնում և առաքելական թղթերի մէջ: Ճշմարիտ աստուածասիրութիւնն ու եղբայրսիրութիւնը կը որդուած, անբաժան դադափարներ են: Ուստի և Պօղոս առաքեալը քրիստոնէական կեանքի էութիւնը սիրոյ մէջ է տեսնում և բարոյական գերակայի պատկերը իւր սիրոյ ներքոյի մէջ նկարագրում: «Եթէ զիզուս մարդկան խօսիցիմ և զհրեշտակաց, և սէր ոչ ունիցիմ եղէ, ես իրրեւ զպղինձ, որ հնչէ, կամ իրրեւ զծնծգայս, որ զօգանջեն: Եւ եթէ ունիցիմ զմարդարէութիւնս և զիտիցեմ զխորհուրդս ամենայն և զամենայն զիտութիւնս և եթէ ունիցիմ զամենայն հաւատս՝ մինչև զլերինս փոփոխելոյ, և սէր ոչ ունիցիմ, ոչինչ եմ: Եւ եթէ ջամբիցեմ զամենայն ինչս իմ ազքատաց, և մատնիցեմ զմարմինս իմ՝ յարումնս և սէր ոչ ունիցիմ, ոչինչ օգտիմ: Սէր երկայնամիտ է՝ քաղցրանայ. սէր ոչ նախանձի, ոչ ամբարձրամէ՝ ոչ հպարտանայ, ոչ յանդգնի, ոչ խնդրէ զիւր, ոչ զրգոյն, ոչ խորհի զգար, ոչ խնդայ ընդ անիրաւութիւնս: ամենայնի տուէ, ամենայնի հաւատայ, ամենեւին յուսայ, ամենայնի համբերէ»:

Ո՛րքան վսեմ և սրտառուչ պատկեր: Բրիստոնէական սիրոյ օրհներգն էր սա: Բայց Պօղոս առաքեալը իւր զիտից չէ հնարում այս պատկերը. երկնաւոր Վարդապետի աշակերտներին հալածող Սօղոսն այս առիթը զրել չէր կարող: Բրիստոսի հողին է այստեղ խօսողը: Բրիստոսի անձնաւորութեամբ գերուած, Սորա սուրբ սիրով վառուած առաքելի սրտից կարող էր բղխել այս սիրոյ երգ երգողը: Սա տեսութիւն չէ. անձնաւորեալ Սիրոյ պատկերն է, որ կենդանանում է նորա հոգու առաջ. շնամնողք ինձ եղիրո՛ք, որպէս և ես Բրիստոսի:

Այո՛, քրիստոնէութեան արեգակը Յիսուսի անձնաւորութիւնն է, որից կեանքի ծառագոյցները էին հասել առաքեալների սրբտերի և այնտեղից ամբողջ մարդկութեան մէջ: Կրօնական անձնաւորութեան կատարելատիպն էր Սա, մի կատարելութիւն, որ մարդկային մաքի համար անըմբռնելի երկու ծայրահեղութեան ներդաշնակ միութիւն էր կազ-

մում անհասանելի բարձրութիւն և խոնարհութիւն, մեծութիւն և ծառայական պատրաստակամութիւն: Ազգերի պատմութիւնը քրքրէր, տալիս ու վրայ անկնք, չկայ սիրոյ այնպիսի կատարելատիպ, ինչպէս Կեանքի Առաջնորդն էր: Դի՛նչ էր նորա ամբողջ կեանքի ընթացքը, եթէ ոչ անհուն սիրոյ մի շղթայ: Ո՛ր կարիք, նեղութիւն կար և Նա օգնութեան չէր հասնում, որ հիւանդին Սա չէր բժշկում, որ աղքատի համար Սա սիրտ չունէր, որ սղաոտին չէր մխիթարում: Ո՛ր մեղքի, ապականութեան զոհեր կային և Սա իւր ձեռքը չէր մեկնում նրանց բարձրացնելու: Թշնամի կնք, որին Սա չէր սիրում: Սա մաքուր էր և անարատ քան լոյսը: «Աստուած սէր է» և Սա այդ սիրոյ մարմնացումն էր: Սա սէր էր իւր Վարդապետութեան մէջ, Սա սէր էր իւր զործունէութեան մէջ, Սա սէր էր իւր չարչարանքի մէջ, Սա սէր էր և խաչի վերայ:

Կենսատու սերը քստալմե խաչի վերայից է հասում զկտի մարդկանց սրտերը, այնտեղ զարձեւէք մեր աչքը, այնտեղից սպասենք փրկութիւնը: Ռոյովհառեւ չիք այլով իւրեք վրկութիւն. զի և ոչ անուն ոյլ դոյ ի նեղքոյ երկնից տուեալ ի մարդիկ՝ որով արժան իցէ կեալ մեզ»:

Դարեղին Սարկիսազ:

Ե Կ Ե Ղ Ե Յ Ի Ն

Ե Ի

ԱՂՔԵՏՆԵԻ ԽՆԵՄԵՏԵՐՈՒԹԵՆ ԳՈՐԾԸ.

Քաղկայ՝ և Կսոս ինձ ուսեշ,
ծարակեցի՝ և արքայից ինձ, օստ էի՝
և Ժողովեցի գիւ. մերկ՝ և զգեցուցի
գիւ. հիւանդ էի և Ժուկ գիւ՝ ի բուն-
ի էի, և Եկի մա իս:

Մատ. Ին. 35—36.

Քայ տղն այժմ օրհասական վիճակի մէջ է, անցեալ տարիների տխուր դէպքերը վտանգի ենթարկեցին նորա գոյութեան խընդիրը: Հազարաւոր մարդիկ զրկուած ստա-

ցուածքից, հայրենիքից, բաղխում են ազգային և եկեղեցական հաստատութիւնների, իրենց հաւատակիցների դռները՝ հաց խնդրելով: Սա մի ձգնաժամ է, որ կարող է նաև դէպի բարոյական կորուստ տանել: Մեծ ծրգնաժամերը փրկում կամ կործանում են ազգերին. մեր գլխին եկած փորձանքի հետեւեղները յուսահատականի շափ ծանր են: Մենք միայն մի կէտի՝ զաղթականների խնամատարութեան գործի վերայ, կկամենայինք դարձնել մեր ընթերցողների ուշադրութիւնը:

Մեծ է այն զոհաբերութիւնը, որ առնում է մեր ժողովուրդը, բայց և մեծ են այն արտունջները, որ լսում են զանազան կողմերից: Շատ աղքատներ զրկւում են նպաստից, այն ինչ միւսները կրկնակի են ստանում: Շատերը հարստանալու միջոց են համարում նուէրները և ստացած փողերով վաշխառութիւն անում: Միւսները ստացածները յետ դարձնում՝ իրաւունք համարելով տաննապատիկ աւելի պահանջել: Գրպանում տաննակ բուրլիներ ունեցողը նոյնպէս ձեռք է մեկնում, ինչպէս քաղցից տանջուողը: Աշխատանքի ընդունակ առողջ երիտասարդը նոյնպէս օգնութիւն է ստանում, ինչպէս գործելու աշնդունակ մուրացիկը: Բայց որ ամենից ցաւալին է՝ աշխատասէր, երեսի քրտինքով հաց վաստակելու սովոր ժողովրդի զուակներն այսօր գայթակղութեան մէջ են աշխատանքից խուսափելու և ձրիակերութեան վարժուելու: Միւս կողմից այն ներքին ազնիւ շարժառիթները, որ օրական պարէնը հաղիւ հայթայթող ժողովրդին ստիպում են բաժին հանել իրենց եղբայրների համար՝ հետզհետէ թուլանում և անհետանում են այդպիսի գայթակղեցուցիչ դէպքերի պատճառով: Մեր կարծիքով այս վերքերը յառաջանում են մասամբ և անկանոն բաշխման պատճառով: Ուստի և պարտք համարեցինք Արարտառի ընթերցողներին ծանօթացնել թէ ի՞նչ սկզբունքներով և ի՞նչպէս է կազմակերպուել աղքատների խնամատարութեան գործը քրիստոնէական եկեղեցու մէջ անցեալում և թէ ինչպէս է այժմ քաղաքակիրթ աշխարհում յուսարով՝ որ շատերի համար կարող է օգտակար լինել:

Ա.

Աղքատների խնամատարութիւնը մինչև Կոստանդին:

Աղքատների խնամատարութիւնը զուտ քրիստոնէական երևոյթ է և նորա ծագումն ու զարգացումը սերտ կապ ունի քրիստոնէութեան ծագման և տարածման պատմութեան հետ: Այստեղ ևս պէտք է փնտռելք այն սկզբունքները, որոնցով պէտք է ղեկավարուել աղքատների խնամատարութեան գործում: Աղքատներ եղել են նաև նախաքրիստոնէական ժամանակներում և նպաստներ են ստացել իրենց համաքաղաքացիներից, բայց հեթանոսութեան մէջ այդ գործը բոլորովին օրիշ սկզբունքների վերայ էր հիմնուած, քան քրիստոնէութեան մէջ. մէկի մէջ եսական շարժառիթներն են գործում միւսի մէջ մաքուր սերը. այնտեղ քաղաքացիական ու պետական շահերը, այստեղ բարոյական պարտքի զգացումը: Բայց ոչ միայն շարժառիթներն են տարբեր, այլ և օժանդակութեան հետեւեղները: Հեթանոսութեան մէջ աղքատը իւր նպաստն ստանալուց յետոյ՝ գործադրում էր իւր շռայլութեան, զուարճութեան համար, այն ինչ քրիստոնէութեան մէջ նիւթական օգնութեան հետ կապուած էր և մինչև իսկ զլիաւոր նպատակն էր՝ բարոյական կրթութիւնը. մէկում՝ ծուլութեան առիթ էին այդ նպաստները, միւսում՝ աղքատի անկախ գործունէութեան օժանդակելու միջոց, եթէ նա գործելու ընդունակ էր: Երկրորդ կէտի ճշմարտութեան մէջ համոզուելու շատ առիթ կուենանք, մի քանի փաստ բերենք առաջինը ապացուցանելու համար:

Հռովմում, ինչպէս և առհասարակ հեթանոսութեան մէջ աղքատանոցներ, հիւանդանոցներ այն մաքով, ինչպէս մենք ենք հասկանում, չեն եղել: Հռովմի հիւանդանոցները միմիայն սարուկների և զինուորների համար էին, ստրուկներին խնամում էին աշխատող ձեռքերից չղրկուելու, իսկ զինուորներին՝ պետութիւնն ընդարձակելու, ազգերին ստրկութեան մէջ պահելու և հռովմում կապուած ու կաշտուած հաւաքելու համար: Հիւանդանոցներն ու բնմն զուտ շահադիտական միտումներով

Հիմնուած հաստատութիւններ էին: Չկար նոյնպէս որբերի և այրիների խնամատարութիւն կամ այդ նպատակով հիմնուած հաստատութիւններ: Սպարապետների օրէնքը թոյլ կազմուածք ունեցող երիտասնների վերաբերութեամբ յայտնի է ամենքին: Հռովմէական կայսրութեան ժամանակ մանուկներ կրթելու հաստատութիւններ են հիմնուում: Բայց ոչ սիրող շարժառիթներով, այլ ժողովրդի աճեցողութեան զգալի նուազման առաջն առնելու համար: Հռովմէական հասարակ ժողովրդին բաժանած նուէրներն ու նպաստները միմիայն քաղաքական գիտումներով էին կատարուում: այսպէս էին Եռլիոս Կեսարի և ուրիշ հերոսների տուած ճաշկերոյթներն ու պարգևները: Կայսրները դահ բարձրանալիս իրենց յօրեղանները կատարելիս կամ յաղթութիւն տօնելիս դրամ էին բաշխում ժողովրդին: չը-ոպլ ճաշկերոյթներ տալիս թատրոնում կամ կրկէաներում ձրի զուարճացնում: Այս կարգի նուիրատուութեան մէջ պէտք է հաշուել նաև կայսրների կտակով թողած նուէրները: Հացահատիկների բաշխումն ևս զուտ քաղաքական գիտումներով սկսուած գործ էր և նոյն գիտումներով էլ շարունակուում էր կայսրութեան ժամանակ: Հռովմէական պատմութեան ծանօթ անձինք լաւ գիտեն, թէ ինչպիսի ապականող ազդեցութիւն էին անում այս հրապուրիչ պարգևները: Ամբոխը պատրաստ էր այսօրուայ պաշտած հերոսի կամ կայսր սպանող յաջորդին ցնծութեան աղաղակներով րնդունել, եթէ նորանից ևս սպասելիք ունէր: Շատ բնորոշ է այն հանգամանքը, որ ամենամեծարոյական կայսր՝ մայրասպան Ներոնի ժամանակ պարգևներն ամենից առատ էին:

Անհրաժեշտ է մի ուրիշ կէտ ևս պարզել հեթանոսութեան և քրիստոնէութեան մէջ եղած աղբաւանդի խնամատարութեան դանդաղութիւնը շօշափելի դարձնելու համար: Քրիստոնէական բարեգործութեան հետ սերտ կապուած էր աշխատանքի նուիրականութեան գաղափարն, ինչպէս կտաններ, որից զուրկ էր հեթանոսական աշխարհը: Միայն հեթանոսութեան սկզբնական ժամանակներում երբեք է, որ արհեստը պատուաւոր զբաղմունք է եղել: Հեթանոսական քաղաքակր-

թութեան հետ ընկնում է և ձեռքի աշխատանքի արհեստի յարգը: Երկրագործութիւնը համեմատաբար աւելի երկար ժամանակ ազնիւ պարապմունք էր համարուում: սակայն ստրկութեան տարածման հետ զարգանում է և ազատ ժողովրդի արհամարհանքը դէպի աշխատանքը: Դա այժմ միայն ստրուկներին է վայել իսկ կրթուած քաղաքացին փրկստոյա-կան տեսութիւններով տրուեստներով պիտի զբաղուէր: Եռնական և հռովմէական փրկստոյութեան մէջ յեղյեղուում է այն միտքը, թէ արհեստն ազատ մարդուն անվայել գործ է: Եթէ ազատ քաղաքացիներից արհեստաւորներ էլ կային, ստրուկներից շատ աւելի յարգ չունէին: Աշխատանքը, որ կեանքի հիմնքարն է, հեթանոս քաղաքակրթութեան մէջ իւր արժանաւոր յարգը չէ ստանում: Սորա վերայ պիտի աւելացնենք նաև, որ աշխատանքի նուազման հետ չէր նուազել և ազահութեան անկը: Ոչ մի տեղ վաշխառութիւնն այնպիսի չարիք չէ գործել, ինչպէս կայսրութեան ժամանակի հռովմում: * Չրիակերութիւնը որին սովորել էր ժողովուրդը պատերազմի դաշտում ձեռք բերած աւարների փշրանքներից բաժին ստանալով և կայսրների տուած պարգևներով, ինչպէս և աշխատանքի բարոյական գնահատութեան բացակայութիւնը որպէս էին, որ հռովմէական պետութեան արմատները կռծելով՝ նորա անկումը պատրաստեցին:

Ուրիշ պատկեր է տալիս մեզ քրիստոնէութիւնը: Մեր կրօնի հիմնադիրը աղքատների բարեկամն էր (Մատ. Ե. 2, Ժա. 5) և ողորմածութեան ջատագովը (Մատթ. Ե. 7), Ողորմութեան քանակութիւնը չէր որ նա գնահատում էր, այլ այն սիրտը որից բղխում է ողորմութիւնը: Այլի կողմ լուսն աւելի արժէք ունէր Մորա աշքում քան բոլոր մեծատունների նուէրները: Աղքատներին, կարօտաւորներին խնամելը բարձր առաքինութիւն էր համարում Սա (Մատթ. ԸԵ. 35-36. 40). բազմութիւ առակներով և քարոյցներով այն միտքն էր շեշտում: Քրիստոս, թէ երկրաւոր բարիքը չի կարող կեանքի բարձրագոյն նպատակ լինել, թէ քրիստոնէան ուրիշ գանձ ունի գանձելու, որ ոչ ցեց և ուտիճ ապականեն, և թէ երկրաւոր բարիքը միայն միջոց է

* M. v. Nathusius.-Die Mitarbeit der Kirche an der Lösung der sozialen Frage, Leipzig, 1895, էր. 210.

աւելի բարձրը ձեռք բերելու համար: Ասել է թէ քրիստոնեայի իւր հաւատակցին առած նիւթական օժանդակութիւնը չէր կարող միայն նորա կեանքի արտաքին ասպնջութեան նըպատակով սահմանափակուած լինել: Քանի որ երկրայինը ոչինչ էր առանց աւելի մի բարձր նպատակի: այլ այդ նիւթական օժանդակութիւնն էլ ուղղուած պիտի լինէր զէպի այն բարձր նպատակը որ է իւրաքանչիւր քրիստոնեայի տենչը այսինքն արքայութեան ժառանգ լինելու: Աստուծոյ արքայութեան զաղափարը քրիստոնէութեան կեդրոնական զաղափարն էր և նորա օրէնսգիրքը սիրոյ օրէնքը: ապա ուրեմն և այդ արքայութեան քաղաքացու կեանքը սիրոյ օրէնքի համեմատ կազմակերպութիւն պիտի ստանար: Արդ, այդ սէրը անտարբեր մնալ չէր կարող, երբ ժառանգակիցներէից մէկը քրիստոնէութեան բարձր նպատակից շեղուելու պայմանների մէջ էր: Ինչպէս քրիստոնեայի արտաքին կեանքը այնպէս և նորա բարեգործութիւնը պէտք է քրիստոնէութեան հիմնական սկզբունքների համեմատ կազմակերպութիւն ստանար: «Միջրուք կատարեալք, որպէս և հայրն ձեր երկնաւոր կատարեալ է» և պատուիրել էր Բրիստոս Բայց միւս կողմից քրիստոնէի ողորմածութեան միայն հաւատակիցը կամ քաղաքացին չպէտք է արժանանար, ինչպէս հեթանոսութեան մէջ էր, այլ ամեն մի կարօտեալ, այն Երկնաւոր Հայրը որի կատարելութեան պիտի ձգտէր քրիստոնեան: «զարեգակն իւր ծագէ ի վերայ չարաց և բարեաց» և ածէ անձրև ի վերայ արդարոց և մեղաւորաց: Այսպէս պիտի լինէր և քրիստոնեան: Բրիստոսի մի ուրիշ խօսքը: «Միջրուք զթածք, որպէս և Հայրն ձեր երկնաւոր զթած է» և Սամարացու առակը (Լուկ. Ժ. 25-37) աւելի որոշ կերպով ցոյց են տալիս որ քրիստոնեան օգնութեան պիտի հասնէր ամեն տեղ, ուր կարիք կար: առանց խտրութեան: Եւ յիշաւ ի կեղեցական պատմութիւնը վկայում է, որ այս հիմունքների վերայ է սկսուել և զարգացել քրիստոնէական բարեգործութիւնը: Բրիստոնէական կեղեցին ամենայն զգուշութեամբ խուսափել է այնպիսի բարեգործութիւնից, որ ստացողի բարոյական շինութիւնը վտանգի

էր ենթարկում: Թէև աշխարհը ոչ մի տեղ այնպիսի զօհարերութեան պատրաստակամութիւն չէ տեսել, ինչպէս քրիստոնէութեան մէջ:

Առաքելական շրջանում արդէն նկատելի են աղքատների խնամատարութեան այն սպասմանը, որոնք հետզհետէ պէտքէ աւելի զարգանային կատարելագործուին: Բրիստոնէական առաջին համայնքի մէջ եղբայրութիւնը մինչև ստացուածքի հաւասարութեան է հասնում: հաւատացեալները կամաւ նուէր են բերում իւրենց գոյքը, որպէս զի ամենքն էլ, որոնց մէջ և աղքատները, իրենց կարիքները հոգալ կարողանային (Գործք. Բ. 44, Դ. 34-35): Եօթ սարկաւազների ընտրութեամբ սկսուում է աղքատների խնամատարութեան կազմակերպութեան գործը: Այս դէպքը մի օրինակ է, թէ սիրոյ ամենափառ ժամանակն էլ կանոնաւորութիւնը և կարգապահութիւնը անհրաժեշտ պայման է գործի յաջողութեան համար: Այնուհետև առաքելային թղթերից տեղեկանում ենք, որ նա նուէրներ էր հաւաքում Երուսաղէմի քրիստոնեայ աղքատների համար: Գաղ. Բ. 10. Ա. Կորնթ. Ժ. 2. 1-4. Բ. Կորնթ. Լ. 2-3: Աշխարհի համար չտեսնուած, չխօսուած մի գործ էր սա: Մենք յիշեցինք, որ հեթանոսութեան մէջ միայն քաղաքացիներն էին նպատակ ստանում պետութիւնից կամ հաւրուստ համաքաղաքացիներից, ուրիշ ազգութեան պատկանողների մասին ոչ ոք չէր հօգում: Իսկ հրէաների մասին երեւակային անգամ անկարելի էր: Այդ դժբաղդ ժողովուրդն այն ժամանակ ևս ատելութեան առարկայ էր: Բայց միայն հեթանոսն էր ատում կամ արհամարհում նորան: այլ և հրէան ինքը պղծութիւն էր համարում հեթանոսի հետ նիստ ու կաց ունենալ: բայց այդ հեթանոս ժողովրդի անդամները՝ աւետարանի բարոգը լսելուց յետոյ՝ նուէրներ են ժողովում Երուսաղէմի հրէայ հաւատացեալների համար:

Բայց ամենից զարմանալին այն հանգամանքն է, որ քրիստոնէական բարեգործութեան հետ սերտ կապուած է աշխատանքի նուիրականութեան զաղափարը: Սուիրատուն և ստացողը պարտաւոր են հաւասարապէս աշխատել: առաջինը ուրիշին օգնելու համար միջոց

ուենեալու: Իսկ երկրորդը ձրխակեր չգտանալու համար Ասեղ է աշխատանքի ընդունակ աղքատը միայն ամենահրաժեշտ գէղքում էր նպաստ ստանում որից յետոյ պարտաւոր էր անձամբ իւր հացը վաստակել: Որ գործանայր՝ մի՛ ևս գողասցէ: այլ մանաւանդ վաստակեսցէ գործել անոր իւրովը գրարիս զի թաւական իցէ տալ ում՝ պիտոյ իցէ: Նփես. Ի. 28 յորդորում է առաքեալը: Նուիրատուի գնահատութեան չափը սերն է: որից բխում է նուէրը: և ոչ քանակութիւնը: Սոյն իսկ աղքատ հաւատացեալներն էլ իրենց ունեցածից բաժին են հանում իրենցից աւելի աղքատների համար: Բ. Կորնթ. Ը. 2—4: Իւրաքանչիւր քրիստոնեայ պարտաւոր էր իւր ընտանիքի պարէնը հայթայթել: «Իսկ եթէ որ իւրոց և մանաւանդ և ընտանեաց խնամ ոչ տանիցի ի հաւատոցն ուրացեալ է: և չար ևս քար զանհատան է: Ա. Տիմոթ. Ե. 8: Աշխտանքի դատաւարը աւելի որոշ է արտաշայտում Բ. Թեապ. Գ. 12: ուր առաքեալը Տիրոջ անուենով արդշում է նրանց որոնք «ստահակութեամբ գնուն, գործ ինչ ոչ գործեն: այլ յուլացեալ հետաքրքիր չըջին»: զի հանգարտութեամբ գործեցեն՝ և զիւրեանց հոց կերիցեն»: Սա մինչև իսկ պատուիրում է «խորշել յամենայն եղբօրէ՝ որ ստահական գնայցեն»: Բ. Թեա. Գ. 6. այսինքն համայնքից դուրս հանել և յիշխում է իւր քարոզչութիւնը՝ «Եթէ որ ոչ կամիցի գործել և կերիցէ մի: Բ. Թեա. Գ. 10: Սոյն առաքեալն աշխատանքներին յորդորում է: Մի՛ անձրանայք դրարիս գործել:» հոսկանայի է որ ձյմարիտ կարօտեալների համար Այսպէս ուրեմն համայնքի լաւ տեղում լինելու պայմաններից մէկն էլ աշխատասիրութիւնն է: Բայց այդ աշխատանքը հարստութիւն զիջելու համար չէ: այլ աւելի տպիւն հոգատակի համար «զի բաւական իցէ տալ ում պիտոյ իցէ: Մենք աւետարանների և առաքելական թղթերի մէջ շատ կէտեր ունիւր: ուր նիւթական ազատութիւնը դատադարձութեամբ է: Տեսէք և զգոյշ լիւրժ յամենայն ազատութեան, զի ոչ եթէ ի մթերից ընչից ուրուք իցն կեանք նորա: Ղուկ. ԺԲ. 15. Իսկ առաքեալն ամենայն չարեաց արմատը ազատ-

թիւնն է համարում: Ոչ միայն Պողոս այլ և միւս առաքեալները յորդորում են բարեգործ լինել: «Հաւատք աւանց գործոց մեռեալ են»: Թակ. Բ. 26: «Որ ոչ սիրէ զեղբայր իւր, զոր տեսանէ, զԱստուած, զոր ոչն ետես, զինորդ կարիցէ սիրել: Ա. Թովհ. Դ. 20:

«Որոց և այրեաց» խնամատարութիւնը նոյնպէս համայնքի զլիաւոր ուշադրութեան առարկայ էր: Ծշմարիտ կրօնաւոր լինելու պայմաններից մէկն էր բոտ Թակ. Ա. 27. «այցելու լինելորոց և այրեաց ինկղութեան իւրեանց»: Բայց այրիներից միայն արժանաւորներն էին համայնքից օժանդակութիւն ստանում: «Եթէ մանկունս սնուցեալ իցէ, եթէ զհիւրս ընկալեալ իցէ, եթէ զորոց զոսս լուացեալ իցէ, եթէ նեղելոց բաւական լեալ իցէ, եթէ դամենայն գործոց բարեաց զհետ երթեալ իցէ: Ա. Տիմոթ. Ե. 10: Ինչպէս դատարկաշըջիկը, աշխատանքից խռօտփողը համայնքից նպաստ չէր ստանար այնպէս և անարժան այրին: Օժանդակութիւն չեն ստանում և այն այրիները, որոնք որդիք և թոռներ ունին: Ա. Տիմ. Ե. 3—4:

Կր շարունակուի:

Դարեգին Սարկաւադ:

Ի Բ Ե Ն Է Ո Ս

Ե Ի

ՆԵԹԱՐՆԵՐ ՆՈՐԱ ԳՐՈՒԱՆՆԵՐԻՅ.

Իրենեայ կամ ինչպէս մեր տօնացոյցի մէջ և մեր նախնեաց գրուածներում սովորաբար յիշուում է՝ Նրանոս հեռեւորն առաքելոց, մին է եկեղեցւոյ տին ամենահին հայրերից, որոնք, առաքելական աւանդութեան ներկայացուցիչ և զօրեղ ջատագովներ հանդիսանալով՝ մեծապէս նպաստել են իրենց բազմակողմանի գործունէութեամբ երկրորդ դարու նորակազմ, ներբուստ և արտաբուստ անչափ վասնդների ենթարկուած եկեղեցին անարատ պահելու և որոշ կարգերով, որոշ դաւանական սկզբունքներով հաստատուն հիմունքների վերայ հաստատելու: Սորա կեանքի վերաբերմամբ մեր ունեցած հատուկոր տեղեկութիւններից